ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1
ՀՀ Վայոց ձորի մարզխորհրդի նիստի

Ք. Եղեգնաձոր

31 մարտի 2021թ. Ժամը՝ 11:00

Մարզխորհրդի նիստը նախագահում է ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա. Գրիգորյանը: Քարտուղարում է ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի գլխավոր քարտուղար Ա.Կարապետյանը:

Մարզխորհրդի նիստին մասնակցում են՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Ն.Ասատրյանը, մարզի Եղեգնաձոր համայնքի ղեկավար Դ.Հարությունյանը, Վայք համայնքի ղեկավար Թ.Ավետյանը, Ջերմուկ համայնքի ղեկավար Վ.Հովհաննիսյանը, Արենի համայնքի ղեկավար Հ.Սահակյանը, Գլաձոր համայնքի ղեկավար Ա.Մովսիսյանը, Եղեգիս համայնքի ղեկավար Ա.Ստեփանյանը, Զառիթափ համայնքի ղեկավար Ս.Բաբայանը (նիստի ընթացքում առողջության կտրուկ վատթարացման պատճառով թույլտվություն խնդրեց նիստից բացակայելու), Մալիշկա համայնքի ղեկավար Գ.Նազարյանը, ՀՀ ԱԱԾ Վայոց ձորի մարզային վարչության պետ Կ.Միքայելյանը, ՀՀ ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության պետ Գ.Ազիզյանը, ՀՀ ՊՆ Զ ԵՎ ՋՀԾ Վայոց ձորի մարզային տարածքային ստորաբաժանման ղեկավար Ա.Նահապետյանը, ՀՀ ԱԻՆ ՓԾ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության պետ Հ.Սարգսյանը: Նիստին հրավիրվել են նաև մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ:

Նիստի բացման խոսքով հանդես եկավ ՀՀ Վայոց ձորի մարզպետ Արարատ Գրիգորյանը: Նա ներկայացրեց նիստի մասնակիցներին և քննարկման դրեց մարզխորհրդի նիստի օրակարգի նախագծի բոլոր 8 հարցերը: Առաջարկություններ, լրացումներ և դիտողություններ չհնչեցին: Մարզխորհուրդը հաստատեց նիստի օրակարգը միաձայն:

Օրակարգի առաջին հարց՝ համայնքների ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 2021 թվականի սուբվենցիայի ծրագրերի վերաբյալ:

Նիստը նախագահող Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյանը օրակարգի առաջին հարցի վերաբերյալ ձայնը տվեց մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Ա.Կոստանյանին:

Զեկուցողը ներկայացրեց, որ 2021թ. մարտ ամսին ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժինը մարզի համայնքներից ստացել է թվով 46 սուբվենցիոն հայտ:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել 46 ծրագիր՝ 2 149 747 568 ՀՀ դրամ արժողությամբ, որից՝ 956 120 688 ՀՀ դրամը կամ 44,5 %-ը համայնքների ներդրումն է, իսկ 1 174 501 412 ՀՀ դրամը կամ 54,6 %-ը՝ սուբվենցիայի գումարն է, 19 125 468 ՀՀ դրամը կամ 0,9 %-ը՝ մասնավոր ներդրումն է:

Ա. Գլաձոր համայնք - ներկայացրել է 3 ծրագիր՝ 149 778 440 ՀՀ դրամ, որից մասնավոր ներդրող՝ 15 500 468 դրամ (10%), համայնք՝ 62 479 142 դրամ (42%), սուբվենցիա՝ 71 798 830 դրամ (48%):

Բ. Մալիշկա համայնք – ներկայացրել է 5 ծրագիր՝ 159 054 000 ՀՀ դրամ, որից համայնք՝ 86 859 900 դրամ (55%), սուբվենցիա՝ 72 194 100 դրամ (45%):

Գ. Զառիթափ համայնք – ներկայացրել է 5 ծրագիր՝ 346 876 800 ՀՀ դրամ, որից համայնք՝ 126 936 595 դրամ (37%), սուբվենցիա՝ 219 940 205 դրամ (63%):

Դ. Ջերմուկ համայնք – ներկայացրել է 4 ծրագիր՝ 190 014 579 ՀՀ դրամ, որից համայնք՝ 96 562 886 դրամ (51%), սուբվենցիա՝ 93 451 693 դրամ (49%):

Ե. Եղեգիս համայնք – ներկայացրել է 3 ծրագիր՝ 257 019 300 ՀՀ դրամ, որից համայնք՝ 89 278 255 դրամ (35%), սուբվենցիա՝ 167 741 045 դրամ (65%):

Զ. Եղեգնաձոր համայնք – ներկայացրել է 12 ծրագիր՝ 357 690 900 ՀՀ դրամ, որից մասնավոր ներդրող՝ 3 625 000 դրամ (1%), համայնք՝ 200 512 925 դրամ (56%), սուբվենցիա՝ 153 552 975 դրամ (43%):

Է. Արենի համայնք – ներկայացրել է 9 ծրագիր՝ 592 587 450 ՀՀ դրամ, որից համայնք՝ 239 209 673 դրամ (40%), սուբվենցիա՝ 353 377 777 դրամ (60%):

Ը. Վայք համայնք – ներկայացրել է 5 ծրագիր՝ 96 726 099 ՀՀ դրամ, որից համայնք՝ 54 281 312 մլն դրամ (56%), սուբվենցիա՝ 42 444 787 դրամ (44%):

Նիստը նախագահողը դիմեց մասնակիցներին օրակարգի առաջին հարցի վերաբերյալ զեկուցողին հարցերի և առաջարկությունների ներկայացման նպատակով:

Հարց՝ (ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյան)

Ըստ համայնքների՝ համայնքը քանի սուբվենցիայի ծրագիր է ներկայացրել և ինչքան է համայնքի ներդրումը:

Պատասխան՝ (զեկուցող Ա.Կոստանյան)

Զեկուցողը հակիրճ ներկայացրեց պահանջվող տեղեկատվությունը՝

Ա. Եղեգնաձոր համայնք – ներկայացրել է 12 ծրագիր՝ 357 690 900 ՀՀ դրամ, համայնքի ներդրումը՝ 200 512 925 դրամ (56%):

Բ. Վայք համայնք – ներկայացրել է 5 ծրագիր՝ 96 726 099 ՀՀ դրամ, համայնքի ներդրումը՝ 54 281 312 մլն դրամ (56%):

Գ. Ջերմուկ համայնք – ներկայացրել է 4 ծրագիր՝ 190 014 579 ՀՀ դրամ, համայնքի ներդրումը՝ 96 562 886 դրամ (51%):

Դ. Արենի համայնք – ներկայացրել է 9 ծրագիր՝ 592 587 450 ՀՀ դրամ, համայնքի ներդրումը՝ 239 209 673 դրամ (40%):

Ե. Գլաձոր համայնք - ներկայացրել է 3 ծրագիր՝ 149 778 440 ՀՀ դրամ, համայնքի ներդրումը՝ 62 479 142 դրամ (42%):

Զ. Եղեգիս համայնք – ներկայացրել է 3 ծրագիր՝ 257 019 300 ՀՀ դրամ, համայնքի ներդրումը՝ 89 278 255 դրամ (35%):

Է. Զառիթափ համայնք – ներկայացրել է 5 ծրագիր՝ 346 876 800 ՀՀ դրամ, համայնքի ներդրումը՝ 126 936 595 դրամ (37%):

Ը. Մալիշկա համայնք – ներկայացրել է 5 ծրագիր՝ 159 054 000 ՀՀ դրամ, համայնքի ներդրումը՝ 86 859 900 դրամ (55%):

Զեկուցող՝ **Ա.Կոստանյան**

Օրակարգի երկրորդ հարց՝ 2021 թվականի առաջին եռամսյակում համայնքների սեփական եկամուտների հավաքագրման արդյունքների վերաբերյալ:

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ ձայնը տրվեց մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի պարտականությունները կատարող Ա.Սարգսյանին:

Զեկուցողը ներկայացրեց, որ 2021 թվականի մարտի 30-ի դրությամբ մարզի 8 համայնքների տեղական բյուջներով ընդամենը տարեկան եկամուտներ են նախատեսվել 2 978 306.8 հազ. դրամ, իսկ եռամսյակի համար նախատեսվել է 607039.9 հազ.դրամ: Տեղական բյուջեներին ամրագրված ընդամենը եկամուտներից հավաքագրվել է 583737.3 հազ. դրամ, կամ տեղական բյուջեներին ամրագրված ընդամենը եկամուտների հավաքագրումը կատարվել է 96.2%-ով: Աճը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ կազմում է 14.0%, որից սեփական եկամուտներ՝ եռամսյակի համար նախատեսվել է 203878.0 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 178122.7 հազ. դրամ կամ կատարվել է 87.4%-ով: Աճը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ կազմում է 4.6%, այդ թվում.

- Հողի հարկ՝ 17902.0 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 9600.9 հազ. դրամ, կատարվել է 53.6%-ով:
- Գույքահարկ՝ 68440.8 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 57372.5 հազ. դրամ, կատարվել է 83.8%-ով:
- Տեղական տուրքեր՝ 6311.1 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 6090.9 հազ.դրամ, կատարվել է 96.5%-ով:
- Գույքի վարձակալություն՝ 57234.0 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 64992.7 հազ. դրամ, կատարվել է 113.6%-ով:
- Տեղական վճարներ՝ նախատեսվել է 40320.7 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 24919.3 հազ. դրամ, կատարվել է 61.8 %-ով:
- Աղբահանության վճար՝ նախատեսվել է 17347.8 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 8557.0 հազ.դրամ կամ կատարվել է 49.3%-ով:
- Այլ եկամուտներ 12081.9 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 10711.6 հազ. դրամ, կամ կատարվել է 88.7%-ով:

Համահարթեցման կարգով ՀՀ 2021թ-ի համար պետական բյուջեից մարզի համայնքներին եռամսյակի համար նախատեսվել է 396017.7 հազ. դրամ դոտացիա, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է:

Զեկուցողը ներկայացրեց ըստ առանձին համայնքների 2021 թվականի տարեկան բյուջեներին ամրագրված եկամուտների հավաքագրման ընթացքը.

Եղեգնաձոր համայնք.

2021 թվականի բյուջեով սեփական եկամուտներ պլանավորվել են 101384.7 հազ. դրամ, որը թերի է 2020 թվականի համեմատ 590.3 հազ. դրամով: Սակայն եռամսյակի ընթացքում սեփական եկամուտների հավաքագրումն իրականցրել է 98.2 տոկոսով և նախորդ տարվա համեմատ ավել հավքագրված սեփական եկամուտները կազմում է 3723.5 հազ. դրամ:

Ջերմուկ համայնք.

2021 թվականի բյուջեով սեփական եկամուտներ պլանավորվել են 394161.7 հազ. դրամ, որը նախորդ տարվա համեմատ ավել է պլանավորված 20380.5 հազ. դրամով: Որից գույքահարկ՝ 5201.7 հազ. դրամ, հողի հարկ՝ 1000.0 հազ. դրամ, գույքի /հողի/ վարձակալություն՝ 6987.2 հազ. դրամ, տեղական վճար՝ 7754.4 հազ. դրամ: Եռամսյակի ընթացքում սեփական եկամուտների հավաքագրումը կազմում է 69915.9 հազ. դրամ, որը պլանավորված հավաքագրման 97.7 տոկոսն է: Նախորդ տարվա համեմատ ավել հավաքագրված սեփական եկամուտները կազմում է 683.1 հազ. դրամ:

Վայք համայնք.

2021 թվականի բյուջեով սեփական եկամուտներ պլանավորվել են 96379.8 հազ. դրամ, որը նախորդ տարվա համեմատ ավել է պլանավորված 12640.3 հազ. դրամով: Որից գույքահարկ՝ 10157.1 հազ. դրամ, տեղական տուրք՝ 1857.5 հազ. դրամ, գույքի /հողի/ վարձակալություն՝ 5000.0 հազ. դրամ: Եռամսյակի ընթացքում սեփական եկամուտների հավաքագրումը կազմում է 19807.4 հազ. դրամ, որը պլանավորված հավաքագրման 85.1 տոկոսն է: Նախորդ տարվա համեմատ ավել հավաքագրված սեփական եկամուտները կազմում է 5152.9 հազ. դրամ:

Արենի համայնք.

2021 թվականի բյուջեով սեփական եկամուտներ պլանավորվել են 140317.2 հազ. դրամ, որը նախորդ տարվա համեմատ ավել է պլանավորված 24766.1 հազ. դրամով: Որից գույքահարկ՝ 3222.5 հազ. դրամ, տեղական տուրք՝ 2492.0 հազ. դրամ, գույքի /հողի/ վարձակալություն՝ 4429.0 հազ. դրամ: Բյուջեին ամրագրված սեփական եկամուտների եռամսյակի ընթացքում հավաքագրումը կազմում է 17985.7 հազ. դրամ, որը պլանավորված հավաքագրման 106.4 տոկոսն է: Նախորդ տարվա համեմատ ավել հավաքագրված սեփական եկամուտները կազմում է 1587.8 հազ. դրամ:

Գլաձոր համայնք.

2021 թվականի բյուջեով սեփական եկամուտներ պլանավորվել են 57000.0 հազ. դրամ, որը նախորդ տարվա համեմատ ավել է պլանավորված 6300.0 հազ. դրամով: Որից գույքահարկ՝ 4000.0 հազ. դրամ: Բյուջեին ամրագրված սեփական եկամուտների եռամսյակի ընթացքում հավաքագրումը կազմում է 5268.9 հազ. դրամ, որը պլանավորված հավաքագրման 38.1 տոկոսն է:

Եղեգիս համայնք.

2021 թվականի բյուջեով սեփական եկամուտներ պլանավորվել են 59350.0 հազ. դրամ: Բյուջեին ամրագրված սեփական եկամուտների եռամսյակի ընթացքում նախատեսված հավաքագրումը կազմում է 8816.3 հազ. դրամ, որը պլանավորված հավաքագրման 70.4 տոկոսն է:

Զառիթափ համայնք.

2021 թվականի բյուջեով սեփական եկամուտներ պլանավորվել են 178134.5 հազ. դրամ, որը նախորդ տարվա համեմատ ավել է պլանավորված 4164.0 հազ. դրամով: Որից գույքահարկ՝ 3660.0 հազ. դրամ: Բյուջեին ամրագրված սեփական եկամուտների եռամսյակի ընթացքում հավաքագրումը կազմում է 27648.2 հազ. դրամ, որը պլանավորված հավաքագրման 83.6 տոկոսն է:

Մալիշկա համայնք.

2021 թվականի բյուջեով սեփական եկամուտներ պլանավորվել են 30300.0 հազ. դրամ, որը նախորդ տարվա համեմատ ավել է պլանավորված 868.3 հազ. դրամով: Բյուջեին ամրագրված սեփական եկամուտների եռամսյակի ընթացքում հավաքագրումը կազմում է 3787.6 հազ. դրամ, որը պլանավորված հավաքագրման 51.7 տոկոսն է:

Նիստը նախագահողը դիմեց մասնակիցներին օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցողին հարցերի և առաջարկությունների ներկայացման նպատակով:

Հարց՝ (ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյան)

Վայք, Գլաձոր, Եղեգիս և Մալիշկա համայնքների ղեկավարներին՝ ինչով է պայմանավորված Ձեր համայնքում սեփական եկամուտների հավաքագրման ցածր մակարդակը:

Պատասխան՝ (Վայք համայնքի ղեկավար Թ.Ավետյան)

Վայք համայնքի ղեկավար Թ.Ավետյանը նշեց, որ տարվա առաջին եռամսյակի ընթացքում համայնքում սեփական եկամուտների հավաքագրումը դժվարությամբ է իրականացվում բնակչության շրջանում ֆինանսական միջոցների սակավության պատճառով, ուստի առաջին եռամսյակի կտրվածքով ցուցանիշը կարելի է համարել բավարար: Երկրորդ եռամսյակում ցուցանիշները ըստ կանխատեսումների կբարելավվեն:

Պատասխան՝ (Գլաձոր համայնքի ղեկավար Ա.Մովսիսյան)

Փորձը ցույց է տալիս, որ Գլաձոր համայնքում սովորաբար ամեն տարվա առաջին եռամսյակում սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը միշտ ցածր է լինում, սակայն երկրորդ եռամսյակում որպես կանոն ապահովում ենք սեփական եկամուտների հավաքագրման պլանավորվածին մոտիկ ցուցանիշներ:

Պատասխան՝ (Եղեգիս համայնքի ղեկավար Ա.Ստեփանյան)

Եղեգիս համայնքում տարվա առաջին եռամսյակի կտրվածքով սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշը կարելի է համարել բավարար, քանի որ տարվա առաջին ամիսները բնակչությունը բավարար ֆինանսական միջոցների չի տիրապետում: Հավաքագրման ցուցանիշները կշտկվեն երկրորդ եռամսյակից:

Պատասխան՝ (Մալիշկա համայնքի ղեկավար Գ.Նազարյան)
Մալիշկա համայնքում 2021 թվականի առաջին եռամսյակում սեփական եկամուտների հավաքագրման ցածր մակարդակը ունի օբյեկտիվ պատճառներ, սակայն երկրորդ եռամսյակում սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշը կմոտենա պլանավորվածին:

Զեկուցող՝ **Ա.Սարգսյան**

Օրակարգի երրորդ հարց՝ համայնքներում իրականացվող աղբահանության դիմաց գանձվող գումարների և կնքված պայմանագրերի:

Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ ձայնը տրվեց մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի պարտականությունները կատարող Ա.Սարգսյանին:

Զեկուցողը ներկայացրեց, որ դեռևս 2017 թվականից ՀՀ կառավարությանն սկսեց մեծ ուշադրություն դարձնել քաղաքային և գյուղական համայնքներում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների իրականացմանը: Վերոհիշյալ աշխատանքները մինչ այդ իրականացվում էին հիմնականում քաղաքային համայնքներում: 2017 թվականից սկսած առաջնորդվելով ''Աղբահանության և սանիտարական մաքրման մասին'' ՀՀ օրենքի դրույթներով, մասնավորապես համայնքային բյուջեներում, որպես եկամտատեսակ պետք է պլանավորել աղբահանության գանձումները, որպես տեղական վճար, ինչպես ֆիզիկական անձանց կողմից, այնպես էլ տնտեսվարող կազմակերպությունների կողմից:

Աղբահանության վարձավճարները, որպես տեղական վճար, սահմանվում է համայնքի ավագանու կողմից, ընդ որում աղբահանության վճարը սահմանվում է կենցաղային աղբի համար, ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար: Բացի աղբահանության վճարներ գանձելուց, համայնքները պարտավոր են իրենց տարածքներում իրականցնել աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներ, որոնց ֆինանսավորումը պետք է նախատեսվի և իրականացվի համայնքի բյուջեի միջոցներով:

Այսպիսով 2021 թվականի համար մարզի ութ համայնքներում նախատեսվել է աղբահանության դիմաց գանձումներ՝ 73333.2 հազ. դրամ, որից ֆիզիկական անձանցից գանձվող վճար՝ 40771.7 հազ. դրամ, տնտեսվարող սուբյեկտներից գանձվող վճար՝ 32561.5 հազ. դրամ: Նախորդ տարի աղբահանության վճար նախատեսվել էր հավաքագրել 72294.1 հազ. դրամ, սակայն հավաքագրվել է 50852.7 հազ. դրամ, այսինքն կատարվել է 70.3 տոկոսով, որի պատճառները բոլորիս հայտնի համաճարակն ու պատերազմն էին/:

Աղբահանության և սանիտարական մաքրման ծախսերի իրականացման նպատակով մարզի համայնքների կողմից պլանավորվել է 192204.5 հազ.դրամ ծախս, որից աղբահանության նպատակով՝ 91152.2 հազ.դրամ, սանիտարական մաքրման նպատակով՝ 101052.3 հազ. դրամ:

Համայքների կողմից տրված տեղեկատվության համաձայն համայնքներում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների/իրավաբանակ անձանց թիվը

852 է, իսկ աղբահանության ծառայությունների մատուցման պայմանագիր կնքած բնակավայրերում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների/իրավաբանական անձանց թիվը 692 է: Աշխատանք է տարվում բնակավայրերում գործունեություն ծավալող տնտեսվարող սուբյեկտների/իրավաբանական անձանց պայմանագրերի կնքման գործընթացն ավարտել հնարավորինս սեղմ ժամկետում: Պայմանագրերի կնքումը հնարավորություն կտա ապահովել աղբահանության վճարների հավաքագրման բարձր ցուցանիշ:

Նիստը նախագահողը առաջարկեց՝ կան արդյոք հարցեր և առաջարկություններ օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ:

Զեկուցող՝ **Ա.Սարգսյան**

Օրակարգի չորրորդ հարց՝ համայնքներում անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի հավաքագրման էլեկտրոնային միասնական համակարգի ներդրման աշխատանքների կազմակերպման վերաբերյալ:

Օրակարգի չորրորդ հարցի վերաբերյալ ձայնը տրվեց մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի պարտականությունները կատարող Ա.Սարգսյանին:

Զեկուցողը ներկայացրեց, որ 2021թ.-ի հունվարի 1-ից ուժի մեջ է մտել ՀՀ հարկային օրենսգրքի՝ անշարժ գույքի հարկին և փոխադրամիջոցների գույքահարկին վերաբերող դրույթները, համաձայն որոնց, նախկինում գործող գույքահարկը և հողի հարկը փոխարինվել են նոր հարկատեսակներով՝ անշարժ գույքի միասնական հարկով և փոխադրամիջոցների գույքահարկով: Գույքային հարկերի հաշվառման մարմիններում, մասնավորապես համայնքապետարաններում, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ''ՎԻ ԻՔՍ ՍՈՖԹ'' ՍՊԸ –ի, մարզպետարանների անմիջական և ծավալուն աշխատանքների արդյունքում ներդրվել է նոր հարկատեսակների հաշվառման համար նախատեսված էլեկտրոնային միասնական համակարգ՝ e-community.am: Համայնքների համար բացվել են նոր հաշվեհամարներ՝ անհատ ձեռնարկատերերից և քաղաքացիներից համայնքների վարչական տարածքում գտնվող անշարժ գույքի հարկի համար, կազմակերպություններից համայնքների վարչական տարածքներում գտնվող անշարժ գույքի հարկի համար: Ընդ որում, ըստ համայնքների ցանկության հաշվեհամարները բացվել են ըստ բնակավայրերի կամ ըստ համայնքի: Միաժամանակ համայնքների կողմից ներկայացվել են համակարգի ներդրման և սպասարկման համար համայնքի պատասխանատու անձանց տվյալները, ինչպես նաև համայքնում փոխադրամիջոցների գույքահարկի և անշարժ գույքի հարկի հաշվառման և հավաքագրման գործընթացներում մասնակցող աշխատակազմի տվյալները: Այդ տվյալներն ամբողջությամբ ամփոփվել և ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: Որից հետո, սկսած սույն թվականի հունվարի 12-ից Zoom ծրագրի միջոցով տեղի է ունենեցել անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի հավաքագրման

էլեկտրոնային միասնական նոր համակարգի ներդրման աշխատանքների վերաբերյալ առցանց հանդիպում-քննարկում՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ''ՎԻ ԻՔՍ ՍՈՖԹ'' ՍՊԸ՝ ծրագիրն ապահովող կազմակերպության հետ համատեղ: Դասընթացի ավարտից հետո ստեղծվել է ֆեյսբուքյան թիմ, որտեղ նույնպես բուռն կերպով իրականացվում է փորձի փոխանակում և ամբողջ հանրապետության մակարդակով, մեկը մյուսին օգնելով փորձում են ապահովել նոր ներդված համակարգի անխափան աշխատանքը՝ նպաստելով համայնքի բնակիչների պահանջների բավարարմանը:

Մարզպետարանի կողմից անընդհատ կապ է պահպանվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և մարզի համայնքների հետ կապված ընթացող աշխատանքների ճիշտ կազմակերպման, հարցերի առաջանելու դեպքում համայնքներին տրվել են համապատասխան խորհրդատվություններ և ցուցումներ աշխատանքների բնականոն ընթացքը ապահովելու նպատակով:

Հարկ եմ համարում նշել, որ այս նոր ներդրված համակարգում հողի հարկի և գույքահարկի նախորդ տարիների ապառքները ներառված չեն: Ուստի գույքային հարկերի հավաքագրման աշխատանքների ճիշտ կազմակերպման նպատակով, և հաշվի առնելով նոր հարկատեսակների անցման ժամանակահատվածի անխուսափելի դժվարությունները, որոշվեց, որ մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը գործող գույքահարկի և հողի հարկի ավտոմատացված համակարգը զուգահեռ կգործի նոր հարկատեսակների հաշվառման համար նախատեսված էլեկտրոնային միասնական համակարգին:

Անշարժ գույքի հարկի էլեկտրոնային միասնական նոր համակարգն ամբողջությամբ ինտեգրված է Կառավարության փոխգործելիության հարթակին, ինչի արդյունքում Կադաստրի կոմիտեի, Ճանապարհային Ոստիկանության տվյալների շտեմարաններում պահվող անհրաժեշտ տվյալները ինքնաշխատ կերպով փոխանցվում են համակարգ: Գործնականում պետական տվյալների շտեմարաններում հանդիպում են բազմաթիվ վրիպակներ, բացթողումներ, որոնք ուղղելու համար քաղաքացին պարտավորված է լինում հավելյալ դիմել տվյալները տնօրինող մարմնին և սպասել արձագանքի, որ հնարավորություն ունենա պատշաճ կատարել իր հարկային պարտավորությունները: Արդյունքում՝ ոչ միայն դանդաղում է ամբողջ գործընթացը, այլև դժգոհություն է առաջացնում քաղաքացիների մոտ պատճառված անհարմարությունների համար:

Անշարժ գույքի հարկի էլեկտրոնային միասնական նոր համակարգի անշարժ գույքին վերաբերող տվյալների անճշտությունների հարցը քննարկվել է ՀՀ փոխվարչապետ Տ. Ավինյանի գրասենյակում՝ ՀՀ ՏԿԵՆ-ի, Կադաստրի կոմիտեի, Ճանապարհային ոստիկանության և ԷԿԵՆԳ ՓԲԸ-ի ներկայացուցիչների մասնակցությամբ և քննարկման արդյունքներով գրանցող մարմիններին տրվել են համապատասխան հանձնարարականներ, մասնավորապես, արագ արձագանքման խմբերի ձևավորման վերաբերյալ:

Տեղեկատվության ճշգրտման առումով գործուն քայլեր պետք է ձեռնարկվեն նաև ՏԻՄ-երի կողմից, քանզի հակառակ պարագայում ռիսկեր են առաջանալու համայնքների սեփական եկամուտների հավաքագրման առումով:

Հաշվի առնելով վերոնշյալը առաջարկում ենք համայնքների ղեկավարներին՝

ա) ապահովել գույքահարկի գործող և նախկին էլեկտրոնային համակարգերում առկա տվյալների համադրման արդյունքում բացահայտված անճշտությունների գույքագրումը,

բ) պաշտոնական էլեկտրոնային գրությունների միջոցով ՀՀ կադաստրի կոմիտեին ներկայացնել խնդրահարույց գույքային միավորներին վերաբերող փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները,

գ) միջոցներ ձեռնարկել համայնքապետարանում և համայնքի տարածքում վճարային տերմինալների տեղադրման ուղղությամբ՝ ըստ այդ առումով առկա անհրաժեշտության,

դ) համայնքապետարանի համացանցային կայքի և ֆեյսբուքյան էջի միջոցով համայնքի բնակչությանն իրազեկել Կադաստրի կոմիտեի էլեկտրոնային ծառայությունների մատուցման (https://e-cadastre.am) և էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի (https://e-request.am)մասին՝ հնարավորության դեպքում դրանք կիրառելու նպատակով:

Գույքային հարկերի հին համակարգի շահագործման հետ կապված՝ տարիներ շարունակ կիսամյակային պարբերկանությամբ մարզպետարանին ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունից տրամադրվել է մարզի ֆիզիկական և իրավաբանական անձանց անվամբ գրանցված, ինչպես նաև խոտանված տրանսպորտային միջոցների վերաբերյալ էլեկտրոնային ռեգիստրի տվյալները: Ստացված բազային տվյալները վերլուծվել և ըստ առանձին համայնքների տարանջատելուց հետո, տրամադրվել է համայնքներին՝ իրենց կողմից շահագործվող հողի հարկի և գույքահարկի ավտոմատացված համակարգում ճշգրտումներ և հաշվարկներ իրականացնելու նպատակով: Նույն սկզբունքով, ամսական պարբերկանությամբ համայնքներին է տրամադրվել, յուրաքանչյուր ամիս համայնքում հաշվառված և հաշվառումից հանված ֆիզիկական և իրավաբանական անձանց տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկատվություն՝ ստացված ՀՀ ոստիկանության ''Ճանապարհային ոստիկանություն'' ծառայության Վայքի հաշվառման-քննական խմբի կողմից: Այդ աշխատանքները շարունակվում են ներկայումս, քանի դեռ նոր միասնական համակարգում առկա են որոշակի անճշտություններ:

Կարևորագույն հարցերից է նաև ֆիզիկական անձանց անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի վճարումների ընդունման անդորրագրերի հարցը, որն արդեն լուծված է և համայնքներն արդեն կարող են ստանալ՝ ներկայացնելով համապատասխան փաստաթղթեր:

Նիստը նախագահողը տվեց հնարավորություն օրակարգի չորրորդ հարցի վերաբերյալ հարցեր և առաջարկություններ ներկայացնելու:

Զեկուցող՝ **Ա.Սարգսյան**

Օրակարգի հինգերորդ հարց՝ Արցախի Հանրապետությունից տեղահանված և ժամանակավորապես Վայոց ձորում ապաստանած քաղաքացիներին տրամադրվող աջակցության և գործընթացում առկա խնդիրների հետ կապված հարցեր:

Նիստը նախագահող Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյանը օրակարգի հինգերորդ հարցի վերաբերյալ ձայնը տվեց մարզպետի տեղակալ Ն.Ասատրյանին:
Զեկուցողը ներկայացրեց տեղեկատվություն՝

1. Ռազմական դրության պայմաններում առաջացած կարիքների գնահատման և մատակարարման գործընթացում իրականացվող միջոցառումների ընդհանուր նկարագությունը:

2020թ.-ի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի հետևանքով Արցախից ՀՀ տեղափոխված, Վայոց ձոր մարզում ժամանակավորապես հյուրընկալված անձանց կենսաապահովման կարիքները բավարարվել են հնարավորինս համակարգված՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի հանձնարարությամբ ձևավորված, ռազմական դրության ընթացակարգին համաձայն սոցիալական աջակցության շտաբի, կենսաապահովման հանձնաժողովի կողմից և հասցվել են շահառուներին համայնքապետարանների միջոցով: Ռազմական դրության ընթացակարգերի համաձայն համայնքապետարաններում Վայոց ձորում հյուրընկալված յուրաքանչյուր անձի համար իրականացվել է հաշվառում, կարիքի գնահատում, աջակցության տրամադրում: Տրամադրվել է սնունդ, հագուստ (անկողնային պարագաներ, կոշիկներ), դեղորայք, կենցաղային և հիգիենայի պարագաներ: Հատուկ խնամքի կարիք ունեցող անձանց, կամ համակեցության այլ առանձնահատկությունների հետ կապված խնդիրները վեր են հանվել համայնքների սոցիալական աշխատողների և ՍԱՏԳ աշխատակիցների կողմից:

Պարբերաբար իրականացվել է նաև Covid-19 -ի հետ կապված կանխարգելիչ աշխատանքներ: Բոլոր բուժհաստատությունները համագործակցել են պատշաճ մակարդակով և իրականացրել են համապատասխան գործառույթներ:

2 .Կարիքների գույքագրման գործընթացի նկարագրությունը

Կարիքների հիմնական գույքագրումն իրականացրել են Վայոց ձորի 8 համայնքների սոց աշխատողները, ըստ Վայոց ձոր տեղափոխված և մարզի համայնքներում ժամանակավորապես բնակվող անձանց հաշվառված, փաստացի թվի և վերջիններիս կարիքների: Համայնքապետարան-մարզպետարան և համապատասխան գերատեսչություններ շուրջօրյա աշխատանքային ռեժիմով հարցումների միջոցով գույքագրվել է անհրաժեշտ սննդի, դեղորայքի, հիգենիկ պարագաների ցանկը, ամրագրվել առկա առողջական կամ այլ բնույթի խնդիրները և ներկայացվել մարզպետարան: Այնուհետև կարիքները համապատասխան կամ ռազմական դրության պայմաններում գործող ընթացակարգերով ներկայացվել են գերատեսչություններին՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ արտակարգ իրավիճակների, ՀՀ տարածքային կառավարման և

ենթակառուցվածքների, ՀՀ պաշտպանության և ՀՀ առողջապահության նախարարություններին, ինչպես նաև բարեգործական կազմակերպությունների:

3.Կարիքների բաշխման ընթացակարգը, սկզբունքները և առաջնահերթությունը (ով է կայացնում որոշումը, ինչպես և ինչի հիման վրա են որոշվում առաջնահեթությունները)

ՀՀ Վայոց ձորի մարզային շտաբի կողմից գնահատված կարիքների հիման վրա բաշխումը իրականացվել է ըստ նախապես կազմված բաշխման ցուցակների՝ հանձնման և ընդունման ակտերով: Համայնքները ընդունված ապրանքները բաշխել են իրենց համայնքներում առկա հյուրընկալված անձանց թվի և գնահատված կարիքի համապատասխան (սնունդը բաշխվել է հավասարապես ըստ անձանց թվի, իսկ խնամքի, հագուստի հետ կապված հարցերն ըստ կարիքի):

4.Գնման կամ կարիքի ձեռքբերման գործընթացի նկարագրությունը (գնումներն ինչպես են իրականացվում, ձեռքբերված պարագաները ինչ եղանակով են ստացվում, իրականացվում է արդյոք որակի գնահատում)

Մինչ 2020 թ.-ի դեկտեմբեր ամիս պետական գնումներ իրականացնելու կարիք չի եղել, հիմնական կարքիները բավարարել ենք մարդասիրական աջակցությունների համակարգված բաշխման շնորհիվ:

Բացի ձևավորված թիկունքից՝ նախարարությունների միջոցով ԱԻՆ –ի պահեստից ստացվել են աջակցություններ, մարզպետարանի հետ համագործակցել են մի շարք միջազգային և տեղական կազմակերպություններ /ՄԱԿ –ի Միգրացիոն գործակալություն, Համաշխարհային պարենի, ՅՈՒՆԻՍԵՖ կազմակերպությունների, Կարմիր խաչի կոմիտեի, Հայկական Կարմիր Խաչի, ՀՕՖ–ի, AGBU հայկական բարեգործական ընդհանուր միություն, USAID, Ազնավուր հիմնադրամի և այլն/:

Բացի հագուստից, բոլոր աջակցությունները մարզային պահեստից համայնքների միջոցով բաշխվել են ստանալուն հաջորդող 2-5 օրյա ժամկետում: Հագուստի բաշխումը մինչ օրս շարունակվում է համայնքապետարանների միջոցով ըստ կարիքի և եղանակային փոփոխությունների:

Կամավորական կամ հասարակական կազմակերպությունների ներուժը ուղղորդվել է դեպի համայնքապետարաններ՝ փաթեթեների պատրաստման և բաշխման գործում ներառելու համար:

5. Պետական գնումներ

Արցախից տեղահանված անձանց աջակցության նպատակով 2020 թ.-ի ընթացքում

ՀՀ Կառավարության 867 որոշում – Վայոց ձոր մարզին հատկացված 5 մլն դրամից կատարվել է 2,060,490 դրամի գնումներ

ՀՀ Կառավարության 1657 որոշում– Վայոց ձոր մարզին հատկացված 5 մլն դրամից կատարվել է 600,800 դրամի գնումներ

ՀՀ Կառավարության 1789 որոշում – Վայոց ձոր մարզին հատկացված 76,716,000 –ից կատարվել է 32,838,320 դրամի գնումներ

6. Ընդհանուր տեղեկություններ

Սեպտեմբերի վերջից մինչ օրս Վայոց ձորում հյուրընկալվել են մինչ 3100 ԱՀ քաղաքացի, մոտ 1080 անձ վերադարձել է ԱՀ, որից 304–ը մարզպետարանի կողմից կազմակերպած գործընթացով:

Այս պահի դրությամբ մարզի 8 համայնքներում ժամանակավոր բնակություն են հաստատել ԱՀ ից եկած մոտ 1700 մարդ, որոնցից մոտ 700ը երեխաներ: Նրանց զգալի մասը Ադրբեջանի տիրապետության տակ անցած բնակավայրերից են՝ հիմնականում Քաշաթաղի, Ասկերան, Հադրութի, Շուշիի տարածաշրջաններից :

Նիստը նախագահողը տվեց հնարավորություն օրակարգի հինգերորդ հարցի վերաբերյալ հարցեր և առաջարկություններ ներկայացնելու:

Զեկուցող՝ **Ն.Ասատրյան**

Օրակարգի վեցերորդ հարց՝ 2020 թվականի ձմեռային զորակոչի արդյունքների վերաբերյալ:

Օրակարգի վեցերորդ հարցի վերաբերյալ ձայնը տրվեց ՀՀ ՊՆ Զ և ՀԶԾ ՎԶՄ տարածքային ստորաբաժանման ղեկավար Ա.Նահապետյանին:

Զեկուցողը ներկայացրեց, որ 2020թ. նոյեմբեր - մարտ ամիսների ձմեռային զորակոչը Վայոց ձորի տարածքային ստորաբաժանումը կատարել է 102%-ով: Զորակոչվել է առաջադրանքից ավել երկու զինակոչիկ: Չեն զորակոչվել առողջական խնդիրներ ունեցող բազմաթիվ զինակոչիկներ, 30-ից ավել զինակոչիկների տրվել է տարկետում՝ 12-րդ դասարանը ավարտելուց հետո ամառային զորակոչին զորակոչվելու համար:

Ձմեռային զորակոչի ընթացքում խնդրահարույց հարցեր չեն առաջացել, ստացվել է բոլոր համայնքների աջակցությունը: Ձմեռային զորակոչը ուշ սկսելու պատճառով 2021թ ամառային զորակոչի նախապատրաստական աշխատանքները սկսվելու են ս/թ. ապրիլի 1-ից: Դա իրենից ենթադրում է, որ ապրիլի 1-ից բոլոր ամառային զորակոչի ենթակա զինակոչիկները պետք է անցնեն բժշկական հետազոտություն: Ապրիլի 15-ից կսկվեն զորակոչային հանձնաժողովի բժշկական աշխատանքները:

Չնայած 2005թ. ծնված երիտասարդների կցագրումը նախատեսված է իրականացնել 2021թ. ընթացքում, Վայոց ձորի տարածքային ստորաբաժանումը այն իրականցրել է ձմեռային զորակոչին զուգահեռ՝ հունվար ամսից և երեք ամսվա ընթացքում արդեն իրականացվել է կցագրման 80 %-ը:

2020թ. նոյեմբեր - մարտ ամիսների ընթացքում իրականացվել են նաև եռամսյա հավաքներ: Վայոց ձորի տարածքային ստորաբաժանումը պլանավորվածից կրկնակի ավել զինապարտներ է ուղարկել այդ վարժական հավաքներին:

Նիստը նախագահողը առաջարկեց՝ կան արդյոք հարցեր և առաջարկություններ օրակարգի վեցերորդ հարցի վերաբերյալ:

Հարց՝ զոհված, անհայտ կորած և վիրավոր զինվորների ընտանիքների վերաբերյալ:

Պատասխան՝ մարզպետ Արարատ Գրիգորյանը նշեց, որ անհրաժեշտ է մշտական ուշադրության կենտրոնում պահել զոհված, անհայտ կորած և վիրավոր զինվորների ընտանիքների խնդիրները, կազմակերպել պարբերաբար այցելություններ նրանց տներ: Նշվեց, որ մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Ա.Գրիգորյանի, առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն պետ Վ.Ասլանյանի ղեկավարությամբ համայնքների հետ համատեղ համապատասխան աշխատանքներ են տարվում այդ գործընթացը կարգավորելու նպատակով: Առաջարկեց միջոցներ ձեռնարկել պետության կողմից ներկայացվող գյուղատնտեսական ծրագրերի (խելացի անասնագոմ, ջերմոցային տնտեսություն և այլն) վերաբերյալ այդ ընտանիքներին սպառիչ և որակյալ տեղեկատվություն տրամադրելու համար: Ինչպես նաև աշխատանքներ տանել, որ վերոնշյալ ընտանիքները պետության կողմից ստացած գումարները օգտագործեն արդյունավետ և նպատակային, ապահովելով իրենց համար հետագա եկամտի աղբյուր:

Զեկուցող՝ **Ա.Նահապետյան**

Օրակարգի յոթերորդ հարց՝ մարզի քաղաքացիական պաշտպանության վերաբերյալ:

Օրակարգի յոթերորդ հարցի վերաբերյալ ձայնը տրվեց ՀՀ ԱԻՆ ՓԾ ՎՁՄ մարզային փրկարարական վարչության պետ Հ. Սարգսյանին:

Զեկուցողը ներկայացրեց 2020թ. ընթացքում մարզում կատարված աշխատանքները, մասնավորապես՝

- Հաշվետու ժամանակահատվածում համայնքների կողմից կատարվել են տարաբնույթ կանխարգելիչ միջոցառումներ (սելավատարերի մաքրում, ճանապարհների հենապատերի կառուցում, մայր առուների մաքրում, դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում, գետերի հունի ուղղում և այլն):
- ՏԻՄ մասնագետների հետ համատեղ ուսումնասիրություններ են իրականացվել մարզի քարաթափման գոտիներում:
- Մարզի բնակավայրերում 2020թվականի ընթացքում ճնշումային ջրագծերի վրա տեղադրվել են 8 հատ նոր հրշեջ ջրածորակներ, 2 ջրի կուտակման վայր և վերանորոգվել է 2 հիդրանտ: /Ընդհամենը մարզում առկա է 39 ջրածորակ, 3 ջրի կուտակման վայր և 25 հիդրանտ, որից 18-ը չգործող/:
- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության նախաձեռնությամբ և ՀՀ կառավարության 2020 թվականի թիվ 1944 որոշմամբ՝ որպես նվիրատվություն, մարզի

Զառիթափ և Արենի համայնքներին տրամադրվել են ԱԲ-40 ԶԻԼ – 130 և ԱԲ-40 ԶԻԼ – 131 հրշեջ ավտոմեքենաներ:

- Համայնքների կողմից ավարտին է հասցվել պաշտպանական կառույցներին բնակչության ամրագրման հաշվարկները:
- Աշխատանքներ են տարվել մարզի համայնքներում բազմաբնակարան շենքերի, կազմակերպությունների, առանձնատների նկուղների և կիսանկուղների հաշվառման ուղղությամբ: Նոր Ազնաբերդ բնակավայրում կառուցվել է 4 հատ պարզագույն թաքստոց:
- Բնակչության շրջանում տարվել են իրազեկման աշխատանքներ «օդային տագնապ» ազդանշանի դեպքում վարվելակերպի կանոնների պահպանման ուղղությամբ:
- Ռազմական դրության ժամանակ մարզի ՔՊ ծառայությունների, համայնքների ղեկավարների հետ կազմակերպվել և համատեղ աշխատանքներ են տարվել առկա 6 հատ անսարք ազդարարման սարքավորումների վերանորոգման և մոնտաժման ուղղությամբ: Մարզում առկա 33 հատ ազդարարման սաքավորումները գտնվում են սարքին վիճակում և սահմանվել է շուրջօրյա հերթապահություն: Արենի համայնքի կողմից ձեռք են բերվել 4 ազդարարման սարքավորումներ:

Առաջարկվեց՝

1. Համագործակցելով Վայոց ձորի ՄՓՎ հետ ձեռք բերել համապատասխան քանակությամբ Ս-40 տիպի էլեկտրական շչակներ/67 հատ/ և տեղադրել բնակավայրերում: Շչակները տեղադրելուց, հաշվի առնել այն, որ ձայնային ծածկույթի շառավիղը կազմում է 500 մետր:
2. Պաշտպանական կառույցների մուտքերի վրա կախել ցուցատախտակներ (թաքստոց, պատսպարման վայր), իսկ դեպի պաշտպանական կառույցներ տանող երթուղիների վրա՝ ցուցանշաններ:
3. Բնակչությանը տրամադրել տեղեկատվություն իրենց պատսպարման վայրերի վերաբերյալ:
4. Պաշտպանական կառույցները պահել մաքուր վիճակում և ապահովել առաջին անհրաժեշտության պարագաներով:
5. 2021 թվականի հնարավոր գարնանային վարարումների և սելավների ռիսկերից Վայոց ձորի մարզի բնակավայրերը, տնտեսական արժեքներ ներկայացնող տարածքները, գյուղատնտեսական հողատեսքերն ու բնակչության գույքը պաշտպանելու նպատակով առաջարկվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝ (գետերի հունի ուղղում և խորացում, սելավատարերի մաքրում, ճամփեզրերի հենապատերի վերականգնում, գաբիոնային շարվածքներ և այլն):
6. Սողանքների և ջրակալման երևույթների ակտիվացումից խուսափելու նպատակով առաջարկվում է ոռոգման աշխատանքները իրականացնել խնայողաբար ռեժիմով:
7. Բնակավայրերում տեղադրել ջրաղբյուրներ և հիդրանտներ:
8. Կառուցել ջրավազաններ, իսկ առկա ջրավազանները պահել մշտական ջրով:

9. Տարվա բոլոր եղանակներին բնակավայրերում բարեկարգել դեպի գետեր և ջրավազաններ տանող ճանապարհները,
10. Առաջացած հրդեհների ժամանակ ահազանգել 911, միաժամանակ հրդեհաշիջման աշխատանքներին ներգրավել բնակչությանը: Մշտական ուշադրության կենտրոնում պահել համայնքներում ստեղծված կամավոր հրշեջ ջոկատների համալրվածությունը և պատրաստվածությունը,
11. Բնակչության շրջանում տանել բացատրական աշխատանքներ հրդեհային անվտանգության կանոնների պահպանման ուղղությամբ, յուրաքանչյուրի գիտակցությանը հասցնել այն պարզ ճշմարտությունը, որ հրդեհների դեմ պայքարը սոսկ հրշեջների գործը չէ: Միայն այդ դեպքում հնարավոր կլինի նվազեցնել հրդեհների առաջացման հնարավորությունը և խուսափել անցանկալի, իսկ երբեմն ծանր հետևանքներից:
12. Մարզային փրկարարական վարչությունը ակընկալում է տեղական ինքնակառավարման մարմինների և շահագրգիռ կազմակերպությունների հետ սերտ համագործակցություն՝ արտակարգ իրավիճակների կանխարգելման, իսկ առաջացման դեպքում հետևանքների նվազեցման և վերացման ուղղությամբ:

Նիստը նախագահողը տվեց հնարավորություն օրակարգի յոթերորդ հարցի վերաբերյալ հարցեր և առաջարկություններ ներկայացնելու:

Հարց՝ (ՀՀ ՎԶ մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Վ.Խուդավերդյան)

Հայտնի է, որ մինչ 2020թ. պատերազմը արտակարգ իրավիճակների դեպքում սահմանակից բնակավայրերից /մասնավորապես Բարձրունի/ բնակչությունը պետք է տարահանվեր Ջերմուկ: Այժմ, կապված իրավիճակի փոփոխության հետ, Ջերմուկը դարձել է սահմանային բնակավայր: Ուստի անհրաժեշտություն է առաջացել աշխատանքներ իրականացնել արտակարգ իրավիճակների դեպքում Ջերմուկի բնակչության տարահանման ծրագրի մշակման վերաբերյալ: Որպես լիազոր մարմին, ի՞նչ եք առաջարկում:

Պատասխան՝ (ՀՀ ԱԻՆ ՓԾ ՎԶՄ մարզային փրկարարական վարչության պետ Հ. Սարգսյան)

Կառավարության թիվ 1180-Ն որոշմամբ (18 օգոստոսի 2011թ.) վտանգավոր տարածքներից տարահանման են ենթակա 10 կմ շառավղի գոտում գտնվող բնակավայրերը: Ըստ Google planet-ի տեղեկատվության, Ջերմուկ համայնքը գտնվում է այդ 10 կմ շառավղից դուրս (13-14 կմ): Տարահանման պլանների փոփոխություն այս պահին չի լինի, քանի որ ժամանակակից զենքերի տրամագիծը կարող է հասնել նույնիսկ Եղեգնաձոր, որը գտնվում է սահմանից 14 կմ հեռավորության վրա:

Մարզպետի որոշմամբ ստեղծվել է տարահանման հանձնաժողով: Հանձնաժողովի քննարկման և եզրակացության հիման վրա է որոշվելու, Ջերմուկը կմտնի տարահանման ցուցակներում թե ոչ:

Պատերազմական գործողությունների ժամանակ զենքի տեսակների կիրառման կամ դրա սպառնալիքի դեպքում տարահանման մասին որոշում ընդունում է ՀՀ

կառավարությունը, իսկ հակառակորդի հանկարծակի հարձակման դեպքում՝ պետական կառավարման տարածքային, տեղական ինքնակառավարման մարմինները և տվյալ տարածքի զինվորական կայազորի պետը՝ իր իրավասության սահմաններում:

Հարց՝ (ՀՀ ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության պետ Գ.Ազիզյան) Ջերմուկի տարահանման ծրագիրն առնչվում է նաև մի այլ խնդրի: Մասնավորապես՝ գործում է քաղաք տանող մեկ ճանապարհ, ինչը ռազմավարական տեսանկյունից կարող է հանգեցնել լուրջ խնդիրների: Բացի այդ, գործող ճանապարհը նաև եղանակային պայմանների պատճառով ձմռան ամիսների ընթացում հաճախ դառնում է անանցանելի: Այդ հանգամանքը էլ ավելի է ընդգծում դեպի քաղաք երկրորդ ճանապարհ ունենալու ռազմավարական անհրաժեշտությունը: Ի՞նչ տարբերակներ կան:

Պատասխան՝ (ՀՀ ԱԻՆ ՓԾ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության պետ Հ. Սարգսյան)

Այս պահին այլընտրանքային ճանապարհ է հանդիսանում նաև Ջերմուկ-Սարավան հատվածը: Այն սկսվում է Սարալանջ բնակավայրից քիչ վերև, հենակետից (161-րդ կմ-ից), և դուրս է գալիս Կեչուտի ջրամբարի խաչմերուկ: Բայց ճանապարհը գործում միայն ամառային ժամանակահատվածում:

Գոյություն ունի Ջերմուկ տանող մեկ այլ՝ Գնդեվազի ճանապարհ, որը քարաթափման վտանգի պատճառով աներթևեկելի է դարձել մեքենաների համար: Բացի ռազմավարական կարևորությունից, ճանապարհի վերագործարկումը կթեթևացնի գլխավոր ճանապարհի ծանրաբեռնվածությունը, ինչպես նաև հետաքրքրություն կներկայացնի զբոսաշրջության տեսանկյունից:

Ուստի առաջարկվում է ճանապարհի վերանորոգումը սուբվենցիոն ծրագրով ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Արարատ Գրիգորյանը հանձնարարեց տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ Խ.Ասլանյանին զբաղվել այս հարցի ուսումնասիրությամբ:

Զեկուցող՝ **Հ. Սարգսյան**

Օրակարգի ութերորդ հարց՝ սոցիալապես անապահով խավերին ցուցաբերվող օգնությունների վերաբերյալ:

Օրակարգի ութերորդ հարցի վերաբերյալ ձայնը տրվեց մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Վ. Ասլանյանին:

Զեկուցողը ներկայացրեց 2020 թվականին սոցիալական ապահովության բնագավառում կատարած աշխատանքները:

2020 թվականը սկսվեց COVID 19 համավարակով, որն իր հետ բերեց բազում սոցիալական խնդիրներ: Սոցիալական լարվածությունը մեղմելու համար, ինչպես նաև հակահամաճարակային կանոնները պահպանելու համար 5240 ընտանիքի տրամադրվեց պարենային օգնություն:

Սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի ողջ ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզում հանգրվանեցին 3300 արցախցիներ: Կազմակերպվեց նրանց բնակարանով, հագուստով, պարենային, տնտեսական, հիգիենիկ անհրաժեշտ պարագաներով ըստ կարիքի ապահովելու գործընթացը:

Պատերազմից հետո աշխատանքներ տարվեցին զոհված, անհայտ կորած և վիրավոր զինծառայողների ընտանիքների սոցիալական վիճակով առկա խնդիրների գույքագրման և լուծման ուղղությամբ:

01.04.2021 դրությամբ ՀՀ ՊՆ և <<Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ>> է ներկայացվել 98 զոհված զինծառայողների գործեր: <<Զինծառայողների ապահովագրության հիմնադրամի>> կողմից դրական եզրակացություն է տրվել 60 ընտանիքի: Գործընթացը շարունակվում է:

Աշխատանքներ է տարվում վիրավոր զինծառայողների վերաբերյալ տեղեկատվություն հավաքագրելու, հնարավորության սահմաններում աջակցելու և տարբեր ծրագրերում ընդգրկելու ուղղությամբ: ՀՀ ՊՆ է ներկայացվել դեռևս մեկ առաջին խմբի հաշմանդամություն ունեցող զինծառայողի գործ: Անհայտ կորած զինծառայողների ընտանիքները տեղակացվել են , որ կարող են դատական կարգով կարգավիճակ ձեռք բերել, որից հետո գործերը նույն ընթացակարգով կներկայացվեն ՀՀ ՊՆ և <<Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ>> :

2020 թվականին նպաստ են ստացել 1829 ընտանիք: Վճարվել է 664.1մլն դրամ նպաստ: Նպաստի համակարգից դուրս մնացած սոցիալապես անապահով 1232 ընտանիքների նշանակվել է հրատապ եռամսյակային դրամական օգնություն: Վճարվել է 22.8մլն դրամ:

Շարունակվում է ավանդների դիմաց փոխհատուցման աշխատանքները՝ փոխհատուցում է տրվել 201 քաղաքացու: Վճարվել է 36,8մլն դրամ:

Մարզի զբաղվածության տարածքային կենտրոններում գրանցվել է 1062 գործազուրկ: 2020 թվականին իրականացվել է <<Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման» 7 ծրագիր 10,5 մլն դրամ արժողությամբ: Ժամանակավոր զբաղվածություն է ունեցել 38 գործազուրկ, որից 3-ը հաշմանդամություն ունեցող անձինք են: 2021 թվականին վարձատրվող հասարակական աշխատանքներ կկազմակերպվեն մարզում բնակվող արցախցիների համար: Նախատեսվել է իրականացնել 10 ծրագիր ընդամնեը 20 մլն դրամ արժեքով:

Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսության աջակցության տրամադրման» ծրագրում ընդգրկվել է 71 հողօգտագործող:

ՀՀ Վայոց ձորի մարզում ապրում են 4322 հաշմանդամություն ունեցող անձ: Հաշմանդամություն ունեցող անձանց և տարեցների համար տնային պայմաններում ինտեգրացված առողջապահական և սոցիալական ծառայություններ են մատուցել

Հայկական Կարմիր Խաչի ընկերությունը և <<Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիան>>: Ծրագրերի շրջանակներում տնային խնամքի ծառայություն է ստացել 110 տարեց և հաշմանդամություն ունեցող անձինք: Ծրագրերը շարունակվում են:

Մարզի երեք ՍԱՏԲ-ներում հաշվառված են 9298 կենսաթոշակառուներ, ամսական միջին կենսաթոշակի չափը կազմել է 43483 դրամ:

ՀՀ Կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6N 1419-Ն որոշմամբ սահմանված կարգով 5 զոհված զինծառայողների ընտանիքներին տրամադրվել է բնակարանի գնման վկայագիր:

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից՝ սոցիալական աջակցության նպատակով 542 քաղաքացիների տրամադրվել է դրամական օգնություն ընդամենը՝ 22,6 մլն դրամի չափով:

Նիստը նախագահողը առաջարկեց՝ կան արդյոք հարցեր և առաջարկություններ օրակարգի ութերորդ հարցի վերաբերյալ:

Հարց՝ սոցիալապես անապահով խավերին՝ մարզպետարան ուղղորդելու խնդրի վերաբերյալ:

Պատասխան՝ զեկուցողը նշեց, որ վերջին շրջանում ակտիվացել են դիմումները Եղեգնաձոր, Մալիշկա և Գլաձոր համայնքներից: Անհրաժեշտ է համայնքների հետ համատեղ, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Ա.Գրիգորյանի, առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն պետ Վ.Ասլանյանի գլխավորությամբ այցելություններ կազմակերպել այդ ընտանիքներ՝ հասկանալու և ուսումնասիրելու, թե ինչով է պայմանավորված բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի վատացումը և արդյոք այդ քայլը պայմանավորված է սոցիալական ծանր վիճակով, թե դիտվում է որպես լրացուցիչ եկամուտի աղբյուր:

Զեկուցող՝ Վ. Ասլանյան

Նիստը նախագահող ՀՀ Վայոց ձորի մարզպետ Արարատ Գրիգորյանը տվեց հնարավորություն օրակարգի հարցերի վերաբերյալ կամ օրակարգից դուրս այլ հարցերի և առաջարկությունների ներկայացման:

Հարց՝ Վայոց ձորի մարզի տարածքում բոլոր չափորոշիչներին համապատասխան սպանդանոցի բացակայության խնդրի վերաբերյալ:

Պատասխան՝ (ՀՀ Վայոց ձորի մարզպետ Արարատ Գրիգորյան)

Մարզի տարածքում գոյություն ունեցող միակ սպանդանոցը դադարեցրել է իր աշխատանքները և դրվել վաճառքի: Սակայն առաջարկվող ոչ նպատակահարմար գնի պատճառով այդ գործընթացը հետաձգվում է:

Մարզպետը համայնքների ղեկավարներին առաջարկեց աշխատանքներ տանել սպանդանոցների կառուցման գործում ներդրողներին ներգրավելու ուղղությամբ՝ նրանց համար ստեղծելով բարենպաստ պայմաններ: Դա կարևոր է հատկապես այն

համայնքներում, որտեղ զարգացած է անասնապահությունը: Եղեգիս, Արենի և Գլաձոր համայնքները այդ առումով նշվեցին որպես թիրախային, քանի որ այնտեղ առկա են ներդրողներ, որոնց հետ հարկավոր է տանել համապատասխան աշխատանքներ:

Մարզպետ Արարատ Գրիգորյանը գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ.Մարգարյանին հանձնարարական տվեց այցելել Գլաձոր համայնք՝ սպանդանոցի կառուցման նպատակով համայնքի ղեկավարի կողմից առաջարկվող տարածքների տարբերակների քննարկման համար: Վայք համայնքի ղեկավարին առաջարկվեց աշխատանքներ տանել վաճառքի հանված սպանդանոցի շուրջ խնդիրների կարգավորման վերաբերյալ:

Հարց՝ Այլ մարզերից կամ տարածքներից անասուններ գնելու և մարզ տարաբնույթ հիվանդություններ ներմուծելու վերաբերյալ

Պատասխան՝ (ՀՀ Վայոց ձորի մարզպետ Արարատ Գրիգորյան)

Մարզպետը առաջարկեց բոլոր համայնքների ղեկավարներին որևէ այլ մարզից կամ տարածքից չգնել անասուններ՝ առանց համապատասխան բժշկական եզրակացության, տարաբնույթ հիվանդություններից խուսափելու նպատակով:

Նշվեց, որ վերջերս Զառիթափ համայնքը առանց համապատասխան թույլտվության գնել է անասունների խմբաքանակ, որի 90 %-ը վարակված է բրուցելոզով: Բացի վարակի տարածման վտանգից, դա կարող է նաև վնաս հասցնել Վայոց ձորին՝ որպես մաքուր միս և անասուն վաճառողի համբավ ունեցող մարզի:

Առաջարկվեց նաև ժամանակավորապես անասուն չգնել Զառիթափ համայնքից՝ մինչև սանիտարահիգիենիկ աշխատանքների ավարտը:

Նիստի ավարտից հետո նիստը նախագահողը հրավիրեց գործարար Արմեն Գաբրիելյանին և հնարավորություն տվեց մասնակիցներին ելույթներ ունենալու համար:

Ելույթ ունեցավ ՀՀ Վայոց ձորի մարզպետ Արարատ Գրիգորյան

Մարզպետը ներկայացրեց իր հրավերով մարզխորհրդի նիստին մասնակցող գործարար Արմեն Գաբրիելյանին և նրա իրականացրած գործունեությունը: Ընդգծվեց հետպատերազմյան շրջանում առավել կարևորություն ներկայացնող <<Ողջ մնալու արվեստ>> (ՈՄԱ) ՀԿ միջոցով իրականացվող դասընթացները, որոնց գլխավոր նպատակը ազգի մարտական պատրաստվածության բարձրացումն է: Դասընթացները շուտով կմեկնարկեն նաև Վայոց ձորի մարզի տարածքում: Նշվեց, որ այս առումով անհրաժեշտ է համատեղ աշխատանքներ տանել համայնքների ղեկավարների հետ:

Ելույթ ունեցավ Գլաձոր համայնքի ղեկավար Ա. Մովսիսյան

Ներկայացրեց <<Ողջ մնալու արվեստը>> ՀԿ-ի գործունեությունը մարզում: Նշեց, որ մարզի տարբեր համայնքներից 4 հրահանգիչ արդեն վերապատրաստում են ստացել և պատրաստ են դասընթացներ վարել: Հորդորեց բոլոր համայնքապետարաններին իրենց համացանցային կայքերի և ֆեյսբուքյան էջերի միջոցով համայնքների բնակչությանն իրազեկեն այս ծրագրի վերաբերյալ:

Ելույթ ունեցավ գործարար Արմեն Գաբրիելյանը

Գործարարը նույնպես կարևորեց հետպատերազմյան շրջանում <Ողջ մնալու արվեստ> (ՈՄԱ) ՀԿ միջոցով իրականացվող գործունեությունը: Միաժամանակ պատրաստակամություն հայտնեց ավելի քան 1,5 մլն ՀՀ դրամի աջակցություն ցուցաբերել <<ՈՄԱ>> Վայոց ձորի մարզային կենտրոնի ձևավորման ժամանակ կենտրոնի կահավորման աշխատանքներին:

Ամփոփելով նիստը, ՀՀ Վայոց ձորի մարզպետ Արարատ Գրիգորյանը շնորհակալություն հայտնեց մասնակիցներին: Մարզպետը նշեց, որ հաջորդ մարզխորհրդի նիստին կհրավիրվեն նաև համայնքի ավագանու անդամները, բնակավայրերի վարչական ղեկավարները:

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյան